

Հ Ա Մ Ե Ր Գ \*

Խոնջ, ուժասպառ և վիրավոր հոգիով,  
Կանգ կ'առնեմ հուսկ հովանոցին տակ ջերմոտ  
Մայր բընութեան, ուր հանգիստն է ապահով:  
Հանգիստ, դադար երջանիկ՝

Ցեա պայքարին՝ որ զիս լիկեց, կորզելով  
Ազնւագոյն մասն հոգւոյս,  
Անյաղթ տենչանքն յաւերժին

Եւ երազկոտ ապրումներու ճոխութիւնն,  
Գաղափարի կատարն անհաս,

Ուր աչքերով անձկագին  
Նայած եմ միշտ սիրակարօտ գեղեցկին:

Անարշաւոյս ցաւերուս լոկ ըսփոփանքն  
Հոս կը գտնեմ ես, ապաստան գգուանքիդ,  
Ո՛վ բընութիւն, որ մայրենի բազուկով

Կը փայփայես զիս ծոցիդ վրայ, տալով ինձ  
Երանութիւնն յաւերժական վախճանին:

Ո՛վ սիրտ իմ, ո՛վ սիրտ իմ, կուէ անօթիս  
Դու միակ կէտ շարժիչ, կեդրոնն իսկ կեանքիս,

Ընդարձակուէ՛ ու սիրէ՛ յար տարփազին,  
Ոսկեծղի գեղեցկութիւնն անպատիր,

Զոր դաւարիքն ու արեւն այս հըրավառ,  
Աչքիդ առջեւ կը սփռեն...:

\*\*\*

Մենութիւն, լոյսն հոգւոյս և աչք խորագէտ,  
Անծայրածիր, նոր աշխարհի բանալի,

Քու մէջը յաւէտ կը գտնեմ,  
Այն գոր աշխարհն հէն՝ կողոպտեց շարաշար,

Վերըստացումն ուժերուս,  
Եւ հանճարեղ ըստեղծումի թոխքն հըգօր:

Միայնութիւն, զուն խորհուրդն ես անքնին,  
Քու գրկիդ մէջ կը մեծնայ մարդն իր հոգւով,

Քու շունչիդ տակ կը խաղաղին ալիքներն  
Հողմատատան ծով սրտիս,

Նժդեհ տրտում, երկրէ երկիր տարագիր:  
Ո՛հ, կը սիրեմ ես մենութիւնն այս հովտին,

Որ սեպածեւ կատարներով կ'անջատուի  
Տառապանքի սահմանէն:

Հովիտ ծաղիկեայ, հովիտ չքնաղ և անդորր,  
Որ հայեացքին տակ սիգապանծ լեռներու

Կը ծիծաղի իբր այգածին մարգարօս...:

\* Համերգը գրուած է Պրասէնէ՛ լեռնային միջա-  
վայրի մը մէջ, ուր հեղինակը գտնուած է առողջական  
պատճառով: Սոյն քերթուածը բնութեան երգ մըն է՝  
խոսն խորհրդածութիւններով, զոր ներշնչած են իրեն  
բնութիւնը և պատմական անցեալը:

Որուն կողին հեշտօրօր  
Կը բարձրանան կուենիներ նրբագեղ,  
Եղեիներն մշտադալար կանանչով,

Խոհուն ու թանձր անտառներ հոն կազմելով,  
Որոնց ներքեւ փռուած մամուռը թաւոտ,  
Կ'ըլլայ կայան ըստուերներու մոգական,

Եւ ուր զըւարթ թռչուններ,  
Շարժում ու կեանք կու տան սարսուռ լըռութեան:

\*\*\*

Ու վերեւ այդ ըստուերներու աշխարհին  
Կը հսկեն սէգ կատարներ:

Ո՛հ, վեհապանծ բարձրութիւն  
Գագաթներու երկնամերձ,

Որոնց ճակատը բացուած դէմ յանդիման  
Ատուածական տեսիլքին,  
Մեզ կը տանին քառօսային անցեալին,

Աշխարհներու ընդհարման,  
Երբ տիեզերքն համայն կ'առնէր մարմին, ձեւ,  
Մեծ ոչընչէն դէպի լոյս

Հոլովոյթով իր ասեղ:  
Կատարներն այդ, փռատալըսակը հովտին,  
Պահապաններն անառիկ

Բերդաքաղաքին՝ լոյսի, գոյնի աշխարհին՝  
Կը բանան օրն ու կը փակեն նախ իրենք,  
Ընդունելով այգուն համբոյրն առաջին  
Կենսաբաբախ արեւուն,

Եւ տալով հուսկ անոր՝ ողջոյնը յետին  
Վերջալոյսի շողերուն մէջ ծիրանի:  
Անոնցմէ վեր, երկինքն ահա կը բացուի,  
Երկինքը լուրթ, թափանցիկ:

Թեթեւ ինչպէս փետուր մ'օդին մէջ առկախ,  
Ինձ կը թըլի այն ատեն  
Անհունին մէջ սաւառնիլ՝  
Թօթափած նիւթն ու մարդկային կեղեւանքն,  
Որ կը պատէ թանձրօրէն՝  
Մեր հոգին, աչքն յաւերժութեան միշտ նայող:

Ի՞նչ կայ անդին սա կապոյտէն հըմայիչ. -  
Անհունութիւն, և աշխարհներ նորանոր,  
Երանգ, անորձ հոգեգրաւ,  
Որոնց անվերջ խորութեան մէջ անթափանց՝  
Միտքն յաւիտեան պիտ' երգէ իր պարտութիւնն:  
Կը բաւէ լոկ լըսել, զգալ ձայնն անհունին,  
Որ կը յածի մեր շուրջն ու մեր հոգւոյն մէջ,  
Ըզգալ և լսել, ըզմայլիլ լոկ և խոկալ:  
Այսպէս նստած ժամերով  
Նեղ միջանցքին մէջ խոխով մը ժեռուտ,  
Աչքըս յառած կապոյտին,

Ու ականջներըս ներդաշնակ խոխոջին,  
Լըսած եմ ես անյազուրդ  
Զայնն անհունին խորհրդաւոր և անճառ,  
Նըւագին մէջ թաւալըրոր շուրերուն,  
Անպղտոր՝ գերդ երկինքը ջինջ ու պայծառ,  
Ինչպէս հոգին՝ զոր մեղքը դեռ դիւաբար  
Աղարտած չէ դաւելով:

\*\*\*

Ըսէք ինձի, ո՛վ սերունդներ դարերու,  
Ե՛րբ և ի՛նչպէս երջանկութիւնն, անգին գանձ,  
Գգուեց երբեք սիրտը մարդուն դեղեկոտ,  
Հոսելով միշտ հեղուկը ջերմ երազին,  
Հո՛ն՝ ուր բնութիւնը կը բաշխէ բարկքներ,  
Լուռ ու մենիկ խաղաղութեան մէջ անխոռով,  
Թէ հըրատապ եռուզեռին մէջ քաղքին,  
Ուր կիրքն է սանձարձակ,  
Ցուզումն, աղմուկ, մարդակեղեք չարութիւնն,  
Որ կը լափեն սրտերն անզուսպ հրդեհով,  
Կը փոթորկեն մարդերն ի սէր հաճոյքին,  
Ու հընոցին մէջ կրքերու ատարաշէկ,  
Կ'այլափոխեն և՛ միտք, և՛ սէր մարդկային  
Տառապազին հիւժումով:

Ո՛հ, երջանիկ էք դուք անփորձ գեղջուկներ,  
Զեր աչքին մէջ արեւն ոսկի կը թափէ,  
Կեանքի աւելը ճշմարիտ և հըգօր,  
Մինչդեռ վա՛ր, վա՛ր սա կենսաւէտ լեռներէն,  
Մարդիկ արեւ երազելով անընդհատ՝  
Մըշուշին մէջ կը փըտին:

Ու երբ հովին արեւմուտքի պահերուն,  
Կ'արձագանգէ բըլուրներն իր սըրինգով,  
Կամ արօրն երբ մըլըրճելով հողին մէջ,  
Կը Քրքէր գայն, գարնան յոյսով ակաղձուն,  
Եւ արջառներ կը բառաչեն խանդավառ,  
Ո՛հ, կը զգամ ես թէ կ'երգէ մայր բընութիւնն,  
Քաղցրանըւազ երգն հեշտին,  
Զոր Արարիչն հողին, մարդուն սորվեցուց:

\*\*\*

Բայց մահն անգութ, ամէն տեղ,  
Կը հարուածէ մարդն իր նետով շարաշուք:  
Անտառի խորն, յարգածածուկ հիւղին մէջ,  
Ոսկեձեղուն պալատին մէջ, մայթի վրայ,  
Մահը նոյն է, ճակատագիր հանրական: -  
Խոնարհ, գեղջուկ պատերով  
Կանգնած է դէմըս ահա վայրը դժխեմ,  
Ուրտեղ սիրող սիրտն ունի  
Փոքրիկ դամբան մը, ցաւերու յուշարձան,  
Եւ գուրձ մ' հողի տակ տըխուր՝

Ամփոփած է անդարձ մեկնած սիրելին: -  
Թողլով այս գեղը կախարդիչ բընութեան,  
Թողած սիրուն դաշտերն ու բլուր, սարաւանդ,  
Որոնց վերեւ գարունն ուրախ կը ժպտի  
Դաւարիքով ու ծաղկով,  
Ու կարկաշուն առուններն՝  
Որ կ'ոտտոտեն հեգաճըրկուն պտոյտքներով,  
Դո՛ւք, ճշմարիտ լոյսին գուցէ ի խնդիր,  
Ո՛վ գեղջուկներ պարզամիտ՝  
Անցաք նիւթէն վաղանցուկ  
Դէպի յոյսի ժառանգութիւնն անկորուստ:  
Բայց սրտերն հոս կը հեծեն  
Ու կը ցամքին սիրող աչքերն անմխիթար,  
Քանգի սերունդ մ'ամբողջ, անշունչ, դիտապատ,  
Հոս այս մըտայլ քառակուսի որմէն ներս,  
Կը հանգչի ցուրտ, անճառագայթ ու մերկիկ,  
Եւ գոր արցունքը լոկ և սէր սրտերու՝  
Կը ջերմացնեն անոնց սառած ոսկորներն:

Եւ դու, ո՛վ կոյս լանջագեղ,  
Որ մեղամաղձ հայեացքով  
Կը դիտես լուռ շիրիմներն,  
Դու խինդն ու հմայքը մարդկային աչքերուն,  
Դու սէր, գորով և հեշտութիւն կաթոգին,  
Տո՛ւր ինձ սահմանը կեանքին:  
Երանգ, տեսիլք է միայն,  
Գեղեցկութիւն վաղափուլ,  
Շըքեղ կազմածը ձիւնաթոյր մարմինիդ,  
Որ պիտ' երթայ սա որմին մէջ հուսկ փըտիլ:  
Այո՛, քեզ ալ պիտի քանդէ մոլեգին,  
Իբրեւ ծաղիկ մ' հնձելով մեր դաշտերէն,  
Դաժան մանգաղը մահուան:  
Ո՛ւր յայնժամ վարդն այտերուդ,  
Ո՛ւր բոցն այրող աչքերուդ,  
Եւ հասակիդ վայելչագեղ նրբութիւնն:  
Հողին ներքեւ, աւա՛ղ, պիտի թարշամին  
Շրթունքներուդ հրատոջոր  
Փունջերն ամէն, առանց սիրոյ համբոյրին,  
Ու հրաշագեղ վարսերուդ  
Բուրեան անտառն այրի պիտի ու լուծուի:  
Ըստեղնաշարն ակունքերուդ սատափէ՝  
Փոխանակեն պիտի որդեր զագրելի,  
Մարմինդ ամբողջ վայրագօրէն մանրելու:  
Ինչո՞ւ ապշած կը նայիս դեռ, կո՛յս չքնաղ,  
Այդ քարածերպ մեռելատան անաւոր-  
Ի գո՛ւր ուղեղդ ապիկար  
Ճգնի լուծել յաւերժատանջ առեղծուածն,  
Որուն վըրայ տիեզերքն այս կանգնած է:

Գարձուր աչքերդ տրտմասուզ,  
 Գարձուր զանոնք շիրիմներէն մահերգակ,  
 Տես, շուրջդ արեւն ինչպէս կեանքի կը կանչէ,  
 Կը խայտան խոտն ու ծաղիկ...  
 Դուն ալ քնքուշ, վարդ էակ,  
 Ապրէ՛ զըւարթ, աչքըդ յառած երկնքին:

\*\*\*

Թիթեռն ինչպէս, կամ մուխն անյայտ սուրացող,  
 կամ փոսուռայ, որ մէկ գիշեր կը հրճուի  
 ճանճանչելով ոստոստուն,  
 Յաւիտենին հանդէպ մարդն ալ զաղփաղփուն,  
 Կ'անցնի կ'երթայ անհաշիւ...:  
 Կ'անցնի ամէն ինչ, կ'անցնի փառքն ամպի պէս,  
 Թշուառութիւնն ալ կ'անցնի՝ վէրք մը բացած:  
 Ու վիրաւոր՝ բոլոր մարդիկ նետերով  
 Սին փառքերու, կամ ցաւերու վիշապին,  
 Կ'իյնան իրենց ճամբուն վրայ...:  
 Տժգոհ, անյագ, աչքերնին բաց այս կեանքին:  
 Մահուան դժխեմ թելին տակ  
 Խմբուած լայն բազմութեան մէջ տարասեռ,  
 Ո՛վ կրցած է դիմագրաւել աւերին,  
 Զոր մահն անվերջ կը ցանէ:  
 Ինչո՞վ կեսար մը, Աննիբալ, Նափոլէոն,  
 Հոմեր մը կամ Պինդար, Տանդէ ու Միլտոն  
 Կը տարբերին մահուան դէմ,  
 Սա շիրմին մէջ հանգչող անփայլ գեղջուկէն:  
 Ափ մը փոշի ամէնքէն, կամ արդէն իսկ  
 Հովէն տարուած, լոկ յիշատակ մ'անունի:  
 Եւ ի՞նչ Հոռոմէն, կամ Աթէնքէն փառապանծ,  
 Այսօր մնացած է կանգուն,  
 Դիւցագներէն, հանճարներէն, այն կեանքէն,  
 Հրաշապատում ու բեղուն,  
 Որ զարմանքն էր և օրինակ աշխարհի.  
 Կո՛յր աւերակ, անխօս փլատակ, մոխրակո՛յտ,  
 Որոնց վերեւ հըպարտ անզղեր կը թառին,  
 Եւ ծերպերուն մէջ բուրբ մահ կ'ողբերգեն,  
 Հեզնելով ինչ որ կամքն ու միտք մարդկային  
 Կերտած է ձեւ, մարմին տալով բիրտ նիւթին:  
 Ակրոփողեան ձեռակերտներն արուեստի  
 Ու Պարթենոնն հոյակապ,  
 Աթենասի նըւիրուած,  
 Մընունդ մտքին Փիդիասի  
 Ու Պերիկլեան հօր կամքին,  
 Ինկած կ'ողբան այսօր դարերը նախկին:  
 Ու դեռ տաճարն թէսէոսի հոյանուն,  
 Եւ Բագոսեան թէատրոնն,  
 Ուր սէր, հաճոյք սրտերն անզուսպ գրկեցին,

Իբրեւ լքուած գեղեցկութիւն՝ տրտմօրէն  
 Մեծ պարապին կը նային:  
 Կը սըզան այսպէս տակաւին փառագուրկ՝  
 Ասիոյ հողերն և յունական խտալիան,  
 Ուր մեծութեան և շնորհքի  
 Գանձեր ցանեց խիզախ հանճարն ատտիկեան:  
 Հըռոմն ահա՛ մեծագոր,  
 Ու իր փառքերն անդարձ՝ շքեղ դարերու:  
 Վըրկայ Փորուսն ընդարձակ,  
 Ու կամարներն յաղթական  
 Տիեզերական կայսրերուն՝  
 Սեւերոսի, Կոստանդինի, Տիտոսի,  
 Հեաքէր անցեալ մեծութեանց:  
 Կրքի վայրագ յուշարձան՝  
 Անփիթատրոնն արիւնոտ, ուր մարդ-գազանն  
 Հոռոմի աչքին կը պարզէր  
 Խենեշութիւնն իր բարբերուն ապրտամբ:  
 Ահա դամբանը Կեկիլիա Մեդելլայ,  
 Տիկնոջ կասսիոյ, եռապետին մեծանուն,  
 Շքեղագոյնն Ապպեան ճամբուն զարդերէն,  
 Անշէջ սիրոյ մահարձան՝  
 Ուր ազուաներ տրտմաթախիծ կը վայեն:  
 Կարակալեան հսկայակերտ շերմուկներն,  
 Ուր հեշտութիւնը կը պաշտուէր տապագին,  
 Ու տաճարն ալ խաղաղութեան, ուր Հոռոմ  
 Կը խաբէր միշտ ինքզինքն, ուազգերն համօրէն,  
 Յուշէր միայն՝ թաղուած կեանքի մ' հինաւուրց:  
 Արդ, անոնց վրայ կը սաւառնի յաղթական  
 Համայնաչափ ժամանակն,  
 Լոկ գերագոր տիրակալ՝  
 Կեանքի հանուր ձեւերուն:  
 Ու մայր բնութիւնը թարմագեղ և միշտ նոր,  
 Որ մահերէ վերջ կը յառնէ հրաշակերտ  
 Միշտ աւելի՛ գեղեցիկ,  
 Յաւետասքանչ վերածընած անխափան՝  
 Կը դաշներգէ մեծ գոյութիւնն անըստեղծ,  
 Որ ամէն ինչ կը շարժէ,  
 Որ վախճանն է անշարժ, անծին, անխոտոր:  
 Ու կեանքն այսպէս համաշխարհիկ և բեղուն,  
 Կը դառնայ շուրջն արեւուն,  
 Մինչ մասնական գոյակներ,  
 Ինկած որպէս գոհեր շարժման ընդհանուր,  
 Իրենց մահով տալով ծընունդ ուրիշին,  
 Փառքը կ'երգեն յաւերժալոյս էութեան:

Հ. Մ. ՃԱՆԱՇԵԱՆ

(Շարունակելի)



ՀԱՆԳԻՍՏ ՀՈԳԻՈՅ

Հ. ԱԼԵՔՍԻՍ Վ. ՅՈՎԱԷՓԵԱՆԻ



Փետրուար 25 ... Ս. Ղազարու մահա-  
 ղանդը դարձեալ կը հեծկլտար ծանր ու թաւ  
 ղօղանջներով, ու ամէնուս սիրտը կը համա-  
 կէր դառն կսկիծով:  
 Հ. Ալեքսիս Վրդ. Յովսէփեան վախճա-  
 նած էր:  
 Տասնեւհինգ օրէ ի վեր կը տառապէր սրտի  
 ծանր տաղնապէ. բժշկական խնամք ու դար-  
 ման լաւ ճամբու վրայ դրած էին հիւանդը,  
 որ երկար հանդատի պէտք ունէր. կը յուսա-  
 լինք որ հետզհետէ վերագտնէր իր առողջու-

թիւնը. բայց աւա՛ղ... Մեծ պահքի առաջին  
 առաւօտն իսկ կանուխ ցաւալի լուրը տարած-  
 ուեցաւ վանքին մէջ:

Խոր վշտով կ'արձանագրենք այս տողերը,  
 հանդուցեալին շիրմին պսակ մը զետեղելու  
 յոյսով, ի մխիթարութիւն իր հեռաւոր սի-  
 բերիներուն եւ բոլորիս:

Հ. Ալեքսիս Վրդ. Յովսէփեան ծնած էր  
 Արաբկիր 1878-ի Փետրուար 8-ին, եւ սուրբ  
 աւագանէն կոչուած Յովսէփ: Առողջ, ժիր եւ  
 կայտառ պատանի մը, 1894-ի Սեպտեմբեր  
 25-ին կու դայ Ս. Ղազար իր հօրաքրոջ դաւ-  
 կին՝ Յակոբ Սիրունեանի հետ. միասին կը  
 մեծնան ու կը դարձանան Աստուծոյ տան  
 մէջ, միասին կ'անդամակցին Միաբանու-  
 թեանս 1899-ի Ապրիլ 30-ին ու կը բարձրա-  
 նան քահանայութեան սուրբ աստիճանին  
 1902-ի Օգոստոս 17-ին. Հ. Ալեքսիս Յով-  
 սէփեան եւ Հ. Թէոդոր Սիրունեան, ուրիշ  
 քանի մը դասընկերներու հետ:

Այնուհետեւ Հ. Ալեքսիս կը նուիրուի ու-  
 սուցչական եւ առաքելական զործունէու-  
 թեան, նախ վանքին մէջ, ապա Արեւիք: Եր-  
 կար տարիներ կը մնայ Պոլիս, ու հոն կ'ան-  
 ցընէ իր քահանայական կեանքին մեծ մասը:  
 Քիչ ժամանակ մնացած է վանքին մէջ, դա-  
 նաղան անդամներ Պոլսէն դառնալով. ժա-  
 մանակ մը վարած է վանքին մէջ նսեւ տը-  
 պարանի վարչութիւնը:

Պոլսոյ մէջ երկար տարիներ ժողովրդա-  
 պետ եղած է Ս. Աստուածածին եկեղեցւոյն,  
 եւ խոստովանահայր Սաղըդ-Աղաճի Անարատ  
 Յղութեան Քոյրերու վարժարանին մէջ:  
 Քաղցր յիշատակներ ունէր այդ տեղէն եւ  
 Քոյրերը մեծ յարգանքով ու խանդաղատան-  
 քով կ'օգտուէին իր խորհուրդներէն ու օրի-  
 նակէն. հանդուցեալը առանց վարանելու,